յարիցէ 'ի վերայ մեր որում ստանայցէ աւար, և կամ կողոպտիցէ, եթէ գաւառն և կամ աշխարհն այն ազատապէս չատագովելով անկանելով 'ի բերանոյ սրոյ մինչև եօթն այրս և ոչ կարացէ զերծուցանել զինչս իւրեանց և թշնամին աւարս յարիցէ, կորուսան ընչից գաւառին յայնմիկ հատուցցէ տունն հայոց առ կորուսանողն իբր հատուցեալ պարտս իւր։

ԳԼՈՒԽ ՃԼԸ.

Ամենայն ոք բնակեալ 'ի յերեսս երկրին և հովանաւորութեամբն տանն հայոց եթէ անկանիցի ձեռս թշնամեաց զերի՝ տունն հայոց պարտաւոր է փրկել նմայ և դարձուցանել 'ի տուն, և 'ի բնակութիւնս իւր։

ԳԼՈՒԽ ՃԼԹ.

Ամենայն արհեստաւոր թղթաշինութեան պարտ է յօրինել չափաւոր թուղթ և գերազանց և պատուականագոյն քան զամենայն թուղթ, նշանաւ 'ի մէջ թղթոյն գառն մի դրօշակաւ և թուաւ տարոյն, միայն վասն տանն հայոց այնքան որ հարկեսցի տանն և իշխանութեան հայոց ստանալով գին թղթին իւրոյ։